Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 48. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Սույն օրենքը, նրա 43-րդ հոդվածով նախատեսված լիցենզավորման ենթակա այն գործունեության տեսակների մասով, որոնք մինչև օրենքի ուժի մեջ մտնելու պահն օրենքի կամ իրավական այլ ակտերի համաձայն չեն համարվել լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ, ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակումից վեց ամիս հետո:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տրված լիցենզիաները գործում են մինչև լիցենզիաների գործողության ժամկետի ավարտը:

2.1. Սույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետի՝ մինչև 2018 թվականի հունիսի 27-ը գործող խմբագրությանը համապատասխան տրված լիցենզիաների գործողությունը շարունակվում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Մինչ այդ ժամկետը լրանալը ստացված լիցենզիաների հիման վրա քաղաքաշինության բնագավառում իրականացված գործունեությունը համարվում է օրինական, եթե չի խախտում այլ օրենքի պահանջները:

3. Նոր գործունեությունը լիցենզավորված կարող է ճանաչվել դրա մասին համապատասխան օրենքը հրապարակվելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո:

4. Լիցենզիայի պայմանների ու պահանջների այնպիսի փոփոխությունը, որը սահմանափակում է լիցենզավորված անձի իրավունքները կամ նրա համար նախատեսում է նոր պարտականություններ, ուժի մեջ է մտնում համապատասխան փոփոխությունը հրապարակելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո:

4.1. Սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերի պահանջները չեն տարածվում միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին առնչվող գործունեության լիցենզավորման վրա:

5. Լիցենզավորման պայմանների ու պահանջների փոփոխության դեպքում նախկինում տրված լիցենզիաները պահպանում են իրենց իրավական ուժը՝ սույն օրենքով նախատեսված ժամկետներով:

6. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության արժեթղթերի հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից ընդունված լիցենզավորման կարգերը գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքի պահանջներին:

Եթե սույն օրենքի համաձայն լիցենզիան պետք է տրվի լիցենզավորման կարգի համաձայն, և նման կարգ չի սահմանվել սույն օրենքով նախատեսված մարմինների

կողմից, ապա նման դեպքերում մինչև համապատասխան կարգերի սահմանումը լիցենզիան տրվում է պարզ ընթացակարգով:

7. Մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սույն օրենքի համաձայն գործունեության առանձին տեսակները լիցենզավորող լիազորված մարմինների սահմանումը լիցենզիայի տվյալ տեսակները համարվում են չլիցենզավորվող:

8. Օրենքի 43-րդ հոդվածի 18-րդ բաժնի (§Գործունեության այլ բնագավառներ¦) 7-րդ կետի 7.1 և 7.3 ենթակետերին համապատասխան տրված լիցենզիաները՝ թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ §Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ¦ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9% սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների) ու խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրության և գարեջրի արտադրության գործունեությունների մասերով մինչև 2004 թվականի հուլիսի 15-ը ենթակա են վերաձևակերպման ըստ գործունեության վայրի, որի համար օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը չի գանձվում:

9. 2004 թվականի հուլիսի 15-ից հետո սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված լիցենզիայի, ըստ գործունեության իրականացման վայրի, վերաձևակերպման համար գանձվում է §Պետական տուրքի մասին¦ Հայաստանի Հանրապետության օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը:

10. Օրենքի 43-րդ հոդվածի երկրորդ մասի 6-րդ բաժնի 1-ին կետով սահմանված բանկային գործունեության մասով վայրի պահանջի վերացման դրույթը տարածվում է 2003 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա: